21рդ Դարու Սեմին

ՀԱՅ ԿՆՈՋ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԻՆՔՆՈՒԹԵԱՆ ՀԱՐՑԸ

Դոկտ. Ռուբինա Փիրումեան

ՆԵՐԿԱՅ ԴԱՐԻ ԸՆԿԵՐԱՅԻՆ, տնտեսական ու քաղաքական յեղաշրջումները իրենց դրոշմը դրին նաեւ կանանց կեանքի վրայ: Կինը պարտադրուեց լքել իր այսպէս կոչուած աւանդական կոչումը – իր զաւակների հոգատար դաստիարակ եւ ամուսնու համեստ կողակից – դուրս գալ ասպարէզ եւ կերտել նոր, անկախ ինքնութիւն հասարակութեան մէջ: Այսօր արեւմտեան երկրներում կնոջ տիպարը բնորոշող կարեւոր ազդակներն են համարուում, նրա ինքնութիւնը ամբողջացնող տարրերն են կազմում, ոչ միայն նրայ դերը ընտանիքում այլ նաեւ նրա ուսման մակարդակը, նրա դերակատարութիւնը հասարակական կեանքում եւ նրա զբաղեցրած դիրքը՝ երկրի աշխատոյժի մէջ: Եթէ կինը յաջողել է արժանաւոր ներդրում ունենալ այս չորս բնագաւառներում, ապա ուրեմն նա յաջողել է կեանքում, հասել է լիարժէք դիրքին մարդկային ընկերութեան մէջ: Իսկ այս բարձունքին հասնելու համար կինը խոչընդոտներով լեցուն ճամբայ է կտրել:

Սեռերի միջեւ տիրող խտրականութեան յաղթահարելու եւ արդարութեան ու հաւասարութեան հասնելու պայքարը կնոջ համար դիւրին չէ եղել: Պայքարը գնացել է ամէնուրեք՝ երրորդ աշխարհի ամենայետին երկրներից մինչեւ բարձր քաղաքակրթութեան դրօշակիր հասարակութիւններում:

19րդ դարու վերջերից արդէն հայ կինը եւս ներքաշուել է այս պայքարի մէջ. ու նախ աննշմարելի փոքրամասնութեան ճիգերով, ապա աւելի լայն խաւերով նետուել է ասպարէզ՝ իր արդար կոչումին հասնելու, հայ հասարակութեան մէջ իր արժանի դիրքը գրաւելու համար:

Պայքարը շարունակւում է նաեւ այսօր: Հայ կինը, եթէ ունի ձգտում բարձրանալու, ղեկավար դիրքերի հասնելու, պէտք է դիմակալի տիրող մտայնութիւնը, որ արդիւնքն է պատմութեան խորերից եկած, եւ

հայ մարդու ազգային նկարագրի թելադրած աշխարհայեացքը այլակերպող, զանազան գործօնների, դրանց մէջ նաեւ իսլամ մշակոյթի ազդեցութեան: Չէ՞ որ իսլամ տիրապետութիւնից առաջ, մանաւանդ հեթանոս Հայաստանում, հայ կինը եղել է հաւասար, այր մարդու կողքին, ուս ուսի մաքառել ու պատմութիւն է կերտել: Իսլամ մշակոյթի եւ այլ գործօնների պարտադրած միջավայրում հայ կինը աստիճանաբար վերածուել է ամօթխած, անհամարձակ, անխօս ու հնազանդ մի արարածի: Այնքան խորն են եղել այդ ազդեցութիւնները, որոնց հազիւ են կարողացել յաղթահարել 19րդ դարի Զարթօնքի ազատութեան, ընկերային հաւասարութեան եւ լուսաւորութեան այնքան գրաւիչ ու առիւնքնող գաղափարները: Պէտք էր փոխել ո՛չ միայն հայ տղամարդու ընկալումը կնոջ նկատմամբ այլ նաեւ հենց ի՛ր, կնո՛ջ ինքնարժեւորումը, անսակարկ համակերպուածութիւնը, որոնք ենթադրում էին սահմանափակ դեր հասարակութեան մէջ:

Շատ բան չէ փոխուած նաեւ այսօր: Մեր ընկերութեան մէջ, Սփիւռք թէ Հայրենիք, հայ կնոջ վերելքի դէմ բարձրանում են երկու կարեւոր խոչընդոտներ: Առաջինը հենց դարերից եկած եւ սովորութիւն դարձած իրավիճակը՝ այր մարկանց մենաշնորհեալ դերը ղեկավարութեան մակարդակի վրայ՝ պետական մարմիններից սկսած մինչեւ միութիւններ, կուսակցութիւններ եւ կազմակերպութիւններ: Հարցն այնտեղ է, որ եթէ սփիւռքահայութեան մէջ ասենք տիրական է եղել միջին արեւելեան ազդեցութիւնը, հապա Հայաստանի՞ մէջ: Չէ՞ որ համայնավար գաղափարաբանութեան մէջ կարեւոր հարց էր կանանց ազատութիւնը: Չէ՞ որ ինքը Էնգելսը իր Origins of the Family, Private Property and the Stateի եւ բազմաթիւ այլ աշխատութեանց մէջ պնդում է սեռերի հաւասարութեան վրայ եւ հաւաստիացնում, թէ դա իրականութիւն կը դառնայ միայն համայնավար հասարակութեան մէջ: Ուրեմն ինչո՞ւ 70 տարիների համայնավար տիրապետութիւնը գոնէ այս ծիրի մէջ դրական ազդեցութիւն չունեցաւ հայ հասարակութեան վրա: Հայ կինը դեռ այսօր էլ մի տեսակ երկրորդ կարգի քաղաքացիի իրավիճակ ունի, լուսանցքային դեր՝ մանաւանդ երկրի քաղաքական կեանքում:

Կայ նաեւ երկրորդ կարեւոր խոչընդոտը՝ հենց ի՛ր, կնոջ մէջ: Մեծ է թիւը այն կանանց, թէ՛ հայրենիքում եւ թէ՛ մանաւանդ սփիւռքում, որոնց մէջ գոյութիւն չունեն ձիրքն ու մղումը դուրս գալու ընտանիքի ապահով միջավայրից ու հասարակական, քաղաքական կամ որեւէ այլ նպատակի համար, զինուորագրուելով, պայքարելու դրա համար. պիտի փոխուի իր սեռի «ճակատագրին» անձնատուր, իր համար կանխորոշուած դերի հետ համակերպուած կնոջ մտայնութիւնը: Եւ դա կը լինի միակ նախապայմանը 21րդ դարի առողջ ու յառաջադէմ հայ հասարակութեան ստեղծման համար:

Սխալ են կողմնորոշուած այն կանայք, որոնց կարծիքով ընտանիքից դուրս ստանձնած պարտականութիւնը կամ երկրի աշխատոյժին մասնակցելը հակասում ու վնասում է մայրական առաքելութեան:

Գիտական մէկ ուսումնասիրու-

«Սխալ են կողմնորոշուած այն կանայք, որոնց կարծիքով ընտանիքից դուրս սպանձնած պարտականութիւնը կամ երկրի աշխատոյժին մասնակցելը հակասում ու վնասում է մայրական առաքելութեան:»

թիւն չորս գլխաւոր բաժանմունքների տակ է դնում երեխաների դաստիարակութեան մակարդակը՝ ըստ մայրերի հասարակական դերի.-

Մայրեր, որոնք հասարակական կեանքում պատասխանատուութիւններ կամ դրսի աշխատանք ունեն ստանձնած եւ դա կատարում են սիրով ու եռանդով: Իրենց երեխաներին տալիս են լաւագոյն դաստիարակութիւնը: Այդ մայրերի դաստիարակած երեխաները ապագայ հասարակութեան ամենաառողջ եւ բաղձալի անդամներն են լինում:

Երկրորդ մակարդակի վրայ են երեխաները այն մայրերի, որոնք տանն են մնում եւ միայն իրենց երեխաների դաստիարակութեան են նուիրւում:

Երրորդ մակարդակի վրայ են դասւում այն երեխաները, որոնց մայրերը պարտադրաբար եւ դժկամակութեամբ մղուած են դրսում աշխատելու եւ դրամ շահելու:

Հետաքրքրական երեւոյթ է, որ ամենաանբաւարար դաստիարակութիւն են ստանում այն երեխաները, որոնց մայրերը ամուսնու, ընտանիքի, աւանդոյթների ու հնուց եկած սովորութիւնների պարտադրանքի տակ, հակառակ կամքի տանն են մնում եւ իրենց ուժն ու եռանդը տան սահմանափակ կարելիութիւնների մէջ վատնում:

Մեր ժողովուրդը այսօր ճակատագրական պայքար է տանում գոյատեւելու սփիւռքում, կենաց մահու կռիւ է մղում Հայաստանում եւ Արցախում, ազգային վերածնունդ է ապրում ու հայապահպանման նոր պայքար է սկսել նախկին Խորհրդային Սփիւռքում: Իսկ այս համատարած պայքարի ոլորտում, ընկերային հսկայական ուժ եւ կարողութիւն է կուտակուած հայ կնոջ մէջ՝ իբրեւ հաւաքական էութիւն: Հայ կինը ատակ է յեղաշրջելու Հայաստանի ընկերային դրուածքը. նրա ձեռքում է գտնւում ոչ միայն ապագայ սերնդի դաստիարակութիւնը այլ նաեւ ձեւաւորումը հենց այսօր կազմաւորուող այն ընկերութեան, որ երբեմնի համայնավար հասարակութեան պիտի փոխարինի: Հայ կինն է, որ նոր հայի տիպարը պիտի կերտի. նոր հայը, որ ոչ սփիւռքահայ է եւ ոչ էլ հայաստանահայ այլ հենց միայն հայ. Սփիւռքի մէջ՝ հիւրընկալ երկրների հասարակութիւններում յաջողած, բայց միեւնոյն ժամանակ իր ազգային ինքնութիւնն ու Հայաստանի հանդէպ իր յանձնառութիւնը պահած, իսկ հայաստանում՝ մշակոյթից, քաղաքակրթութիւնից ու հոգեկան եւ բարոյական բարձր արժէքներից զուրկ նիւթապաշտ հասարակութեան յառաջացումը արգիլելու ատակ:

«Սեռերի միջեւ փիրող խտրականութեան յաղթահարելու եւ արդարութեան ու հաւասարութեան հասնելու պայքարը կնոջ համար դիւրին չէ եղել:»

Այս դժուարին մարտահրաւէրի առջեւ կանգնած հայ կնոջ անհատական ներդրումը բաւարար չի կարող լինել. էական է Հայաստանի եւ արտերկրի կանանց կազմակերպութիւնների դերը, նրանց հաւաքական ներդրումը՝ ծրագրուած, յարատեւ աշխատանքով: Մեծածաւալ այս գործունէութիւնը պիտի ընդգրկի նախ եւ առաջ հայ կնոջ դաստիարակութեան գործը՝ մամուլով, հասարակական հաւաքներով, տեղեկութիւնների, գիտելիքների ժամանակակից համաշխարհային քաղաքակրթութեան յառաջդիմութիւնների, մանաւանդ կանանց համաշխարհային իրագործումների ծանօթացումով: Պիտի ընդգրկի կազմակերպուած ճիգ՝ հովանաւորելու հայ կնոջ վերելքը հասարակական կեանքի աստիճաններով, ընդհուպ մինչեւ ղեկավարութիւն: Պիտի ընդգրկի քարոզչական աշխատանք՝ շեփորելու համար յաջողած կանանց օրինակները թէ՛ հայ եւ թէ՛ միջազգային հասարակութեան մէջ, թէ՛ ներկայի եւ թէ՛ անցեալի յիշատակումներով:

21րդ դարու սեմին, հայ նոր հասարակութեան ձեւաւորման հրամայականի առջեւ կանգնած, իր 87ամեայ փորձն ու աւանդոյթն է բերում Հայ Օգնութեան Միութիւնը՝ հայ իրականութեան մէջ կանացի ամենամեծ կազմակերպութիւնը, Հայաստանի եւ Սփիւռքի մէջ տարածուած 180 մասնաճիւղերով եւ միութեան բարձր նպատակների իրագործման գինուորագրուած նուիրեալներով: Հաւատացած եմ, որ հպարտ ճակատով այս մարտահրաւէրին էլ կ'ընդառաջի ՀՕՄը իր ստուար շարքերով եւ գիտակից ղեկավարութեամբ: Մեզ մնում է օգնել, զօրավիգ կանգնել տարուող աշխատանքներին: Մեզ մնում է սատարել ՀՕՄին իր նոր առաքելութեան մէջ, այն է՝ Հայաստանի ընկերային ու տնտեսական ահռելի տագնապի մէջ բռնուած հայ կնոջ անաղարտ նկարագիրը փրկել՝ ներկայ տագնապի ամենածանր բեռը իր ուսերին կրող հայ կնոջ օգնելով, որ չընկրկի, տեղի չտայ, պահի իր հպարտութիւնը, որ իր ներքին տառապանքը չարտացոլայ ոչ իր կեցուածքի եւ ոչ էլ արտաքին երեւոյթի մէջ, որ ցցուած խոչընդոտները, ծաւալուած դժուարութիւնները եւ ճակատագրական մարտահրաւէրները դառնան մղիչ ուժ, նոր եռանդի աղբիւր ու կեանքի նպատակ, որպէսզի ծաղկի հայ ժողովուրդը Հայաստանում ու Արցախում, որպէսզի յաւիտեան գոյատեւի հայ ոգին Սփիւռքում ■